Դրամաշնորհային աջակցություն «Մարդկային անվտանգության ծրագրերի» համար ՖՏ 2023. «Սյունիքի մարզի Կավճուտ գյուղի ջրամատակարարման համակարգի կառուցման» ծրագիր

2024 թվականի մարտի 6-ին տեղի ունեցավ «Սյունիքի մարզի Կավճուտ գյուղում ջրամատակարարման համակարգի կառուցման» ծրագրի (մինչև 130,147 ԱՄՆ դոլար) դրամաշնորհային պայմանագրի ստորագրման արարողությունը:

Դրամաշնորհի պայմանագիրը ստորագրվել է Հայաստանում Ճապոնիայի դեսպան պարոն ԱՈԿԻ Յուտակայի և Քաջարան համայնքի ղեկավար պարոն Մանվել Փարամազյանի միջև: Արարողությանը ներկա էին նաև Քաջարանի համայնքապետարանի աշխատակազմը:

Այս ծրագիրը նպատակ ունի ջրամատակարարման համակարգի կառուցման միջոցով ջրի կայուն հասանելիություն ապահովել Կավճուտ գյուղի բնակչության համար: Ծրագրի արդյունքում ընդհանուր առմամբ 21 տնային տնտեսություն կունենա ջրի հասանելիություն, ինչը կնվազեցնի նաև ջրահավաքով զբաղվող կանանց ֆիզիկական և մտավոր ծանրաբեռնվածությունը: Բացի այդ, գյուղը կկարողանա ընդունել Լեռնային Ղարաբաղից տեղահանված մինչև վեց ընտանիք:

Դրամաշնորհի պայմանագրի ստորագրումը դեսպան Աոկիի և պարոն Փարամազյանի միջև

Դեսպան Աոկիի ելույթը

Դեսպան Աոկին ծանոթանում է համայնքային խնդիրներին տեղի բնակիչների հետ հանդիպման ընթացքում

Դեսպան Աոկին և պարոն Փարամազյանը մեկնարկեցին ծրագրի սկիզբը